

Տեղեկատվություն
ՀՀ մարզերի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև
համագործակցության վերաբերյալ

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1.	<p>„Սեյվ դը չիլդրեն ինտերնեյշնլ,, հայաստանյան ներկայացուցչության կողմից Ն. Սասնաշենի մշակույթի տան, Կաքավաձորի, Նոր Եղեսիայի, Արայի դպրոցների, Երնջատափի բնակելի շենքի կոյուղու, Բյուրականի մշակույթի տան, Կարբիի մանկապարտեզի վերանորոգում:</p>	<p>2015թ. հունվար-մինչև տարեվերջ</p>	<p>„Սեյվ դը չիլդրեն ինտերնեյշնլ,, հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվում են Ն. Սասնաշենի մշակույթի տան, Կաքավաձորի, Նոր Եղեսիայի, Արայի դպրոցների, Երնջատափի բնակելի շենքի կոյուղու, Բյուրականի մշակույթի տան, Կարբիի մանկապարտեզի վերանորոգման ծրագրեր:</p>
2.	<p>Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն սպանդանոցների զարգացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Հունաստանի Հանրապետության կառավարության ֆինանսավորմամբ Վարդենուտ համայնքում սպանդանոցի կառուցում:</p>	<p>2015թ. ապրիլի 28</p>	<p>Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն սպանդանոցների զարգացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Հունաստանի Հանրապետության կառավարության ֆինանսավորմամբ Վարդենուտ համայնքում կայացել է նորակառուց սպանդանոցի բացման արարողությունը: Մասնակցել են ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, ՀՀ-ում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Իոաննիս Տայիսը, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանակային գրասենյակի դաշտային</p>

			ծրագրերի պատասխանատու Գերոլդ Բոդեկերը:
3.	„Հայաստան,, համահայկական հիմնադրամի և Մեծ Բրիտանիայի տեղական մարմնի հետ համատեղ մանկապարտեզի կառուցում Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքում:	2015թ. մայիսի 25	Կայացել է „Հայաստան,, համահայկական հիմնադրամի և Մեծ Բրիտանիայի տեղական մարմնի 87,5 մլն դրամ ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքում կառուցված մանկապարտեզի բացումը: 40 մլն դրամ համաֆինանսավորել է Սասունիկի համայնքապետարանը: Երկհարկանի մանկապարտեզն իր հարկի տակ կարող է ընդունել մինչև 90 երեխա:
4.	Մասնակցություն Արգենտինայի ազգային տոնին նվիրված ընդունելությանը:	2015թ. մայիսի 25	ՀՀ-ում Արգենտինայի դեսպանության հրավերով մարզպետը մասնակցել է Մասնակցություն Արգենտինայի ազգային տոնին նվիրված ընդունելությանը: Մարզպետը ՀՀ-ում Արգենտինայի դեսպան Գոնսալո Ուոիոլաբեիտային հրավիրել է այցելել Արագածոտնի մարզ:
5.	ՀՀ- ում Արգենտինայի արտակազ և լիազոր դեսպան Գոնսալո Ուոիոլաբեիտայի այցը Արագածոտնի մարզ:	2015թ. հունիսի 5	ՀՀ- ում Արգենտինայի արտակազ և լիազոր դեսպան Գոնսալո Ուոիոլաբեիտայի այցը Արագածոտնի մարզ: Դեսպանին ընդունել է մարզպետը: Քննարկվել են հակակարկտային կայանների, կաթիլային ոռոգման, գյուղատնտեսական մթերքների մթերման և գյուղատնտեսական ոլորտին վերակառուցող հարցեր: Դեսպանը ծանոթացել է մարզի պատմամշակութային հուշարձաններին:
6.	Մասնակցություն Շվեդիայի ազգային տոնին նվիրված ընդունելությանը:	2015թ. հունիսի 5	ՀՀ-ում Շվեդիայի դեսպանության հրավերով մարզպետը մասնակցել է Մասնակցություն Շվեդիայի ազգային տոնին նվիրված ընդունելությանը:
7.	Ամերիկայի Միացյալ Նահագների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի կողմից Արագածոտնի մարզի Հարթավան գյուղում իրականացված	2015թ.հունիսի 17	Հարթավան գյուղում կայացել է Ամերիկայի Միացյալ Նահագների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի կողմից Արագածոտնի մարզի Հարթավան գյուղում իրականացված ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրի իրականացման արարողությունը: Միջոցառմանը մասնակցել են ԱՄՆ ՄԶԳ-ի Եվրոպայի և Եվրասիայի

	ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրի իրականացում:		հարցերով բյուրոյի տնօրենի տեղակալ պրն. Ջոնաթան Կացր և ԱՄՆ ՄՁԳ-ի հայաստանյան առաքելության տնտեսական զարգացման գրասենյակի տնօրեն պրն. Նարեն Չանմուգամը:
8.	Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Վերին Սասունիկի բնակիչներ Ռազմիկ Պետրոսյանի, Լաերտ Գրիգորյանի և Արման Հովհաննիսյանի անապահով ընտանիքների համար բնակարանների բարելավման ծրագիր:	2015թ. հունվար-մինչև տարեվերջ	Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Վերին Սասունիկում իրականացվում է Ռազմիկ Պետրոսյանի, Լաերտ Գրիգորյանի և Արման Հովհաննիսյանի անապահով ընտանիքների համար բնակարանների բարելավման ծրագիր:
9.	Դիակոնիա բարեգործական հիմնադրամի և մարզպետ Սարգիս Սահակյանի աջակցությամբ բնակարանի վերանորոգում Պարտիզակ համայնքում:	2015թ. մարտ-հուլիս	Դիակոնիա բարեգործական հիմնադրամի և մարզպետ Սարգիս Սահակյանի աջակցությամբ վերանորոգվում է Պարտիզակ համայնքի պայմանագրային զինծառայող, 2014թ. օգոստոսի 4-ին զոհված ազատամարտիկ Արամ Գրիգորյանի անապահով ընտանիքի բնակարանը:
10.	Կամրջակ հասարակական կազմակերպության կողմից /տնօրեն Մարիա Գորիս/ Լուսապյուղ համայնքի նորակառույց մանկապարտեզին գույքի և սանիտարական պարագաների տրամադրում:	2015թ. հունիսի 3	Կամրջակ հասարակական կազմակերպության կողմից /տնօրեն Մարիա Գորիս/ Լուսապյուղ համայնքի նորակառույց մանկապարտեզին տրամադրվել է գույք և սանիտարական պարագաներ:
11.	USAID-ի կողմից սկսնակ գործարարների դասընթացների ծրագիր:	2015թ. հունիսի 22-հուլիսի 22	USAID-ի կողմից իրականացվում է սկսնակ գործարարների դասընթացների ծրագիր: Շահառուները 40 սկսնակ գործարար են, ովքեր դասընթացից հետո հնարավորություն կունենան մասնակցել դրամաշնորհային ծրագրերի:
12.	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից Կոշի միջնակարգ դպրոցի ճաշարանի, խոհանոցի վերանորոգում և	2015թ. հունիս-օգոստոս	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից վերանորոգվել է Կոշի միջնակարգ դպրոցի ճաշարանը, խոհանոցը և նոր գույք է ձեռքբերվել:

	Նոր գույքի ձեռքբերում:		
13.	COAF-ի կողմից Արտենիի մարզադահլիճի վերանորոգում:	2015թ. հունիս-օգոստոս	COAF-ի կողմից վերանորոգվում է Արտենիի մարզադահլիճը: Ծրագրին 25 % -չ չաճով իր մասնակցությունն ունի մարզպետարանը:
14.	Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Աշտարակի Պերճ Պողոջանի անվան թիվ 3 դպրոցում ոռոգման համակարգի կառուցում:	2015թ. հունիս-հոկտեմբեր	Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Աշտարակի Պերճ Պողոջանի անվան թիվ 3 դպրոցում կառուցվում է ոռոգման համակարգ:
	„Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից դպրոցական գրենական պիտույքների տրամադրում:	2015թ. հունիս-օգոստոս	„Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից Չքնաղ, Արտաշավան, Լուսակն համայնքների 170 դպրոցականի տրամադրվում է դպրոցական գրենական պիտույքներ:
15.	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից մարզի 46 դպրոցում „Տաք սնունդ,, ծրագրի իրականացում:	2014թ. սեպտեմբեր-2015թ. մայիս	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից մարզի 46 դպրոցում իրականացվում է „Տաք սնունդ,, ծրագիրը: 1-4-րդ դասարանների աշակերտների համար տաք սնունդը պատրաստվում է տեղում և մատուցվում է երկար դասամիջոցի ընթացքում:
16.	Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցի վերանորոգում:	2015թ. ընթացքում	Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից վերանորոգվում է Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցը:
17.	Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Աշտարակ, Օհանավան, Մուղնի, Սասունիկ, Կարբի համայնքների խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում:	2014-2015թթ	Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվում է Աշտարակ, Օհանավան, Մուղնի, Սասունիկ, Կարբի համայնքների խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում: Աշխատանքներն ընթացքի մեջ են և շարունակական են լինելու:

18.	Համագործակցություն Դիակոնիա բարեգործական հիմնադրամի հետ:	2014-2015թթ.	Դիակոնիա բարեգործական հիմնադրամը մարզում իրականացնում է սոցիալապես անապահով, ծնողազուրկ, ազատամարտիկների ընտանիքներին ֆինանսական, սոցիալական աջակցության, բնակարանների վերանորոգման, ուսանողական վարձերի տրամադրման ծրագրեր: Իրականացվում են բնակարանի վերանորոգման, ուսման վարձավճարի հատկացման, բուժօգնության, սոցիալական խնդիրների օժանդակման եւ այլ ծրագրեր: Բոլոր ծրագրերը շարունակական են:
19.	ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, շրջանակում ներառական նախակրթարանի ստեղծում Թալին քաղաքում:	2014-2015թթ.	ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի շրջանակում „Թալինի կանանց ռեսուրս կենտրոն,, զարգացման հիմնադրամի կողմից Թալին քաղաքում ստեղծվելու է ներառական նախակրթարան, որը իրականացնելու է Թալինի տարածաշրջանում ծնողների համար հոգեբանական, սոցիոլոգիական, առողջապահական, զբոսաշրջության թեմաներով ուսուցումներ, խորհրդատվություններ:
20.	ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի շրջանակում համատեղ ազգային նվազարանների պատրաստման վարպետաց դպրոցի ստեղծում մարզի սահմանամերձ գյուղերում:	2014-2015թթ.	ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի մրցույթում հավանության է արժանացել մարզի սահմանամերձ գյուղերում համատեղ ստեղծել ազգային նվազարանների պատրաստման վարպետաց դպրոց հիմնելու ծրագիրը:
21.	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» գրասենյակի կողմից առողջության կենտրոնի հիմնադրում Մուղնիում:	2015թ.մարտ-հուլիս	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» գրասենյակի կողմից Մուղնիում հիմնադրվում է առողջության կենտրոն:

22.	„Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից Աշտարակի թիվ 3 և Չքնաղի դպրոցներում համակարգչային դասասենյակների ստեղծում:	2015թ. ընթացքում	„Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից Աշտարակի թիվ 3 և Չքնաղի դպրոցներում իրականացվում է համակարգչային դասասենյակների ստեղծման ծրագիր:
23.	„Հայ կրթական հիմնարկություն,, հիմնադրամի կողմից անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի փոխհատուցում:	2015թ. ընթացքում	„Հայ կրթական հիմնարկություն,, հիմնադրամի կողմից փոխհատուցվել է անապահով 3 ուսանողի ուսման վարձը:
24.	„Հայ կրթական հիմնարկություն,, հիմնադրամի կողմից Նոր Ամանոս, Կանիաշիր, Ակունք, Կաթնաղբյուր, Արագածավանի թիվ 1 դպրոցների վերանորոգում:	2015թ. հունվար-սեպտեմբեր	„Հայ կրթական հիմնարկություն,, հիմնադրամի կողմից հիմնանորոգվում են Նոր Ամանոս, Կանիաշիր, Ակունք, Կաթնաղբյուր, Արագածավանի թիվ 1 դպրոցները:
25.	„Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից Սասունիկի մանկապարտեզի կահավորում:	2015թ. հունվար-հունիս	„Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից իրականացվում է Սասունիկի մանկապարտեզի կահավորումն ամբողջությամբ:
26	Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ բարեգործական կազմակերպության կողմից Թալինի թիվ 3 մանկապարտեզի և Ակունքի դպրոցի ջեռուցման համակարգերի տեղադրում:	2014թ. 27-դեկտեմբեր-2015թ. 16 փետրվար	Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ բարեգործական կազմակերպության կողմից Թալինի թիվ 3 մանկապարտեզի և Ակունքի դպրոցում տեղադրվել են ջեռուցման համակարգեր: